

Ազգային ժողովի պատգամավորներ՝

Արթուր Դավթյանին

Աննա Կարապետյանին

Հերիքնազ Տիգրանյանին

Սուրեն Գրիգորյանին

Նիկոլայ Բաղդասարյանին

22.12.2020թ.

ՀՈՐԴՈՐ

«Իմ քայլը խմբակցության» անդամությունը դադարեցնելու մասին

Հարգելի պատգամավորներ,

Դուք ստացել եք փաստաբանական գործունեության արտոնագիր և հանդիսացել եք փաստաբանական համայնքի անդամ:

Այսօր իշխանությունները չեն իրականացնում հայանպաստ քաղաքականություն, չեն պաշտպանում Հայաստանի Հանրապետության քաղաքացու և պետականության շահերը և որդեգրել են Ադրբեջանի սանձարձակ վարվեցողությանը չպատասխանելու գործելաոճը՝ այդ թվում թույլ տալով, որ Ադրբեջանի նախագահը ծաղրի ՀՀ վարչապետին՝ դրանից բխող հետևանքներով:

Ընդ որում էական չէ այդ գործելաոճը գիտելիքների պակասի, թե դիտավորություն դրսևորելու հետևանք է: Փաստն այն է, որ Հայաստանի Հանրապետության վարչապետը իր բազմաթիվ գործողություններով և հատկապես անգործությամբ արդեն ապացուցել է պետությունը ղեկավարելու իր անկարողությունը:

ՀՀ վարչապետի վարած քաղաքականության արդյունքում՝

Ա. Տապավեցին Արցախի Հանրապետության խնդրի շուրջ բանակցությունները.

Բ. Արցախի Հանրապետությունը ենթարկվեց զինված հարձակման, որի արդյունքում պաշտոնական տեղեկությունների համաձայն նահատակվեց մոտ 5000 հայորդի, բազմաթիվ անձինք ստացան հաշմանդամություն, հարյուրավոր հայորդիներ գերեվարվեցին, հարյուրավոր զինձառայողներ համարվում են անհայտ կորած.

Գ. Հայ ժողովրդից գաղտնի ստորագրվեց մի փաստաթուղթ, որով Ադրբեջանին փոխանցվեց Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը՝ տարբեր հաշվարկներով շուրջ 80 տոկոսը.

Դ. Այժմ վարչապետը Սյունիքի և սյունեցիների անվտանգությունն ապահովելու փոխարեն այնպիսի դիրքեր է հանձնում Ադրբեջանին, որոնց փոխանցմամբ սյունեցիների կյանքն ուղղակի վտանգի տակ է դնում՝ չթողնելով նրանց այլ վայր գաղթելու այլընտրանք:

Ե. Վարչապետի գործողության և անգործության արդյունքում Ադրբեջանը գերեվարել է մեր հայրենակիցներին անգամ ռազմական գործողությունների փաստացի դադարից և Հայտարարությունը ստորագելուց հետո:

Հայաստանի Հանրապետության համար այս օրհասական պահին, երբ վարչապետի օր ավել պաշտոնավարումը վտանգում է հայոց պետականությունը, մենք՝ ներքոշարադրյալ փաստաբաններս,

հորդորում ենք Ձեզ՝

1. չդառնալ այս հայրենադավ գործընթացի մասը և կանգնել քաղաքացու և պետականության կողքին.

2. նպաստել գերիների վերադարձմանը, Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանությանը.

3. դրսևորել բարձր քաղաքացիական գիտակցություն՝ դուրս գալով «Իմ քայլը» խմբակցությունից, սակայն պահպանել մանդատը՝ հետագայում հայանպաստ որոշումներին քվերակելու հնարավորություն ունենալու հեռանկարով:

Ծանուցման հասցե՝ ք.Երևան, Զաքյան 7-2

Փաստաբաններ՝